

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ	
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	0811.01.5 «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0811.01.01.5 «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ
I. Դերը	Գյուղատնտեսը իրականացնում է հողի մշակության, մշակաբույսերի խնամքի, պարարտացման, պտղատուների էտի ձևավորման, գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի, ցանքաքաշրջանառության, պտուղների պահպանման և իրացման աշխատանքներ: Զարգացնում է գյուղատնտեսությունում օրգանական ծագում ունեցող սննդի արտադրությունը: Կատարում է գյուղատնտեսական արտադրանքի հաշվարկում և հաշվեկշռի կազմում:
II. Խնդիրների բնագավառները	
<u>Խնդիրների բնագավառ 1.</u> Հողի մշակման տեխնոլոգիական գործընթացների և խնդիրների կատարում	
Աշխատանքային գործընթացը	Հողի մշակման տեխնոլոգիական, ինչպես նաև հիմնական և մակերեսային մշակման, հողի նախացանքային, ցանքային և հետցանքային մշակում:
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է հողի մշակման խնդիրները, 2) որոշում է մշակաբույսերի պահանջը հողային գործոնների նկատմամբ, 3) իրականացնում է հողի ցանքային և հետցանքային մշակությունը, 4) իրականացնում է ցելերի մշակումը:
<u>Խնդիրների բնագավառ 2.</u> Պտղատու տնկիների աճեցման, այգու հիմնման և խնամքի աշխատանքներ	
Աշխատանքային գործընթացը	Պտղատու բույսերի տնկանյութի աճեցում, այգու հիմնման աշխատանքների, երիտասարդ և պտղաբերող այգու խնամքի, բերքահավաքի և պահպանման աշխատանքների

	իրականացում:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կատարում է պտղատու բույսերի տնկանյութի աճեցմում, 2) որոշում է ծառերի սնման մակերեսը՝ ելնելով սորտից և հողակլիմայական պայմաններից, 3) ընտրում է այգու համար նախատեսված հողատարածք, 4) որոշում է տնկման ժամկետները ելնելով հողակլիմայական պայմաններից, 5) կատարում է այգու խնամքի և ծառերի ձևավորման աշխատանքները, 6) որոշում է պտղատու ծառերի ոռոգման, պարարտացման ժամկետները և նորմաները, ինչպես նաև վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարը, 7) կատարում է բերքահավաքի կազմակերպման աշխատանքները:
Խնդիրների բնագավառ 3. Բույսերի վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների կազմակերպում	
Աշխատանքային գործընթացը	Բույսերի վնասատուների և հիվանդությունների ախտորոշում, հիվանդությունների և վնասատուների համար նախատեսված անհրաժեշտ թունաքիմիկատների չափաբաժինների որոշում և պայքարի միջոցառումների իրականացում:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տարբերակում է բույսերի վնասատուներն և հիվանդություններն, 2) ախտորոշում է բույսերի հիվանդությունների տիպերը, 3) տարբերակում է բույսերի հիվանդությունների դեմ պայքարի թունաքիմիկատները և որոշում դրանց չափաբաժինները, 4) որոշում է սերմերի ախտահանման համար նախատեսված թունաքիմիկատների չափաբաժինները,
Խնդիրների բնագավառ 4. Դաշտային մշակաբույսերի հողերի մշակման, ցանքի, բերքահավաքի կազմակերպման աշխատանքներ	

Աշխատանքային գործընթացը	Դաշտային մշակաբույսերի ցանքի համար նախատեսված հողերի հիմնական և նախացանքային մշակության և բերքահավաքի կազմակերպման աշխատանքներ իրականացում:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է դաշտային մշակաբույսերի ցանքի ձևերը, 2) որոշում է դաշտային մշակաբույսերի ցանքի նորման, ցանքի խորությունը և սնման մակերեսը, 3) իրականացնում է դաշտային մշակաբույսերի վեգետացիայի ընթացքում կատարվող մշակության աշխատանքները, 4) իրականացնում է բերքահավաքի կազմակերպման աշխատանքները
Խնդիրների բնագավառ 5. Ցանքաշրջանառությունների կիրառման պայմաններ	
Աշխատանքային գործընթացը	Ներկայացնում է ցանքաշրջանառության տեսակները և կիրառման պայմանները, մենամշակաբույսի վնասակարությունը և ցանքաշրջանառության նախագծում ու իրացում:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ցանքաշրջանառության տեսակները և կիրառման պայմանները, 2) կատարում է ջրովի և անջրդի հողերում կերային, դաշտային և հատուկ ցանքաշրջանառություններ, 3) կազմում է ցանքաշրջանառության ռոտացիոն սանդղակը, կատարում է ցանքաշրջանառության նախագծում ու իրացում:
Խնդիրների բնագավառ 6. Պաշտպանված գրունտի առանձնահատկությունները	
Աշխատանքային գործընթացը	Պաշտպանված գրունտի կառույցների տեսակների, լուսաթափանց թաղարների օգտագործման, հողախառնուրդի պատրաստման և ախտահանման, բանջարեղենի արտադրության աշխատանքների կազմակերպում:
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է պաշտպանված գրունտի դերը և

	<p>առանձնահատկությունները,</p> <p>2) տարբերակում է ջերմատների տաքացման ձևերը՝ կենսաբանական և տեխնիկական</p> <p>3) իրականացնում է լուսաթափանց թաղարների և հողախառնուրդի պատրաստման, ինչպես նաև հողախարնուրդի ախտահանման աշխատանքները,</p> <p>4) իրականացնում է պաշտպանված գրունտում սածիլների մշակություն և բանջարեղենի արտադրություն,</p>
<p>Խնդիրների բնագավառ 7. Օրգանական գյուղատնտեսության նշանակությունը սննդի արտադրությունում և նրա ազդեցությունը մարդու առողջության վրա</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Օրգանական սննդանյութերի բարենպաստ ազդեցությունը մարդու առողջության վրա, օրգանական պարարտանյութերի օգտագործման և թունաքիմիկատներով մշակաբույսերի մշակության աշխատանքների նվազեցման իրականացում:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) ներկայացնում է օրգանական գյուղատնտեսության նշանակությունը մարդու առողջության պահպանման գործում,</p> <p>2) կիրառում է կենսահումուսը որպես օրգանական պարարտանյութ,</p> <p>3) իրականացնում է մշակաբույսերի մշակությունը առանց թունաքիմիկատների,</p> <p>4) կատարում է թունաքիմիկատների փոխադրման, պահեստավորման և պահպանման աշխատանքներ:</p>
<p>III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/</p>	<p>Գյուղատնտեսը պատասխանատու է իրեն վերապահված աշխատանքի որակի, պարտականությունների կատարման, հողերի արդյունավետ օգտագործման, արտադրական միջոցների պահպանման և անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման համար:</p>
<p>IV. Լեզուները</p>	<p>հայերեն- գերազանց ռուսաց լեզու- բավարար</p>

	այլ օտար լեզու- բավարար
V. Համակարգիչը	MS Word - բավարար MS Excel - բավարար Internet Explorer - բավարար
VI. Գիտելիքները	<p>1) հաղորդակցություն, անվտանգության կանոններն ու առաջին բուժօգնություն,</p> <p>2) հողի մշակման գործընթացներ,</p> <p>3) պարարտանյութերի նշանակության և տեսակների,</p> <p>4) գյուղատնտեսական բեռների, արտադրանքի տեղափոխման և պահեստավորման,</p> <p>5) սերմերի արտադրության տեխնոլոգիա,</p> <p>6) պտղատու բույսերի տնկանյութի աճեցման ագրոտեխնիկան,</p> <p>7) խաղողի մշակության առանձնահատկությունները, բերքահավաքի աշխատանքները:</p> <p>8) պաշտպանված գրունտի առանձնահատկություններ</p> <p>9) դաշտային և կերային մշակաբույսերի մշակության և բերքահավաքի աշխատանքներ,</p> <p>10) հիվանդությունների և վնասատուների պայքարի միջոցներ,</p> <p>11) օրգանական սննդամթերքի առավելությունը մարդու առողջության գործում:</p>

VII. Կարողությունները և հմտությունները

- 1) թիմային աշխատանք,
- 2) սպասարկման հմտություն,
- 3) հաղորդակցվելու հմտություն,
- 4) միջանձնային հարաբերություններ,
- 5) հողի կազմի, բերրիության բարձրացման կարողություններ,
- 6) հողի մշակման աշխատանքներ կարողություններ,
- 7) գյուղատնտեսական բեռների, արտադրանքի տեղափոխման և պահեստավորման կարողություններ,
- 8) մշակաբույսերին հասցրած մոլախոտերի վնասի և դրա դեմ պայքարի միջոցառումների կարողություններ,
- 9) պտղատուների պատվաստի եղանակների և խաղողի տնկանյութի աճեցման հմտություններ,
- 10) սերմերի արտադրության և պահպանման կարողություններ,
- 11) պտղատու ծառերի էտ կատարելու կարողություն,
- 12) խաղողի վազերի ձևավորման կարողություն,
- 13) բանջարեղենային մշակաբույսերի մշակության և բերքահավաքի կիրառման կարողություն,
- 14) բույսերի վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների կիրառման կարողություններ,
- 15) ցանքաշրջանառությունների կիրառման կարողություններ,
- 16) գյուղատնտեսական արտադրության հաշվառման և հաշվետվություն վերաբերյալ կարողություններ,
- 17) դաշտային մշակաբույսերի մշակության և բերքահավաքի կազմակերպման աշխատանքների կարողություն,
- 18) պաշտպանված գրունտում բանջարանոցային մշակաբույսերի մշակության կարողություններ,
- 19) օրգանական եղանակով բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի կիրառման կարողություններ:

**VIII. Անձի որակական
հատկանիշներ**

Պարտաճանաչ, կարգապահ, շփվող, նախաձեռնող,
մաքրասեր, ընկալունակ, թիմում աշխատելու
ընդունակությամբ, ընկերասեր, համբերատար: